ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ կրթության տեսչական մարմնի խորհրդի նիստ

ք.Երևան 03 օգոստոսի 2018թ.

Ժամը 16[00]

Մասնակիցներ

Ա. Հարությունյան - ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)

Հ. Այվազյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Բաբայան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Ա. Ասատրյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Թ. Ավակյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն

Բացակայում էր

Ա.Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ներկա էին

Ալ. Շագաֆյան - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար

Ա. Գևորգյան - Կառավարման խորհրդի քարտուղար

Հրավիրվածներ

Տ. Հակոբյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Ռ. Գալստյան - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու

Ն.Հովհաննիսյան - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների պաշտոններում նշանակելու համար Ռաիսա Գալստյանի, Նարա Հովհաննիսյանի թեկնածությունների քննարկում:

Հարց 2. 2018թ. առաջին կիսամյակում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացված դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվության ներկայացում:

Հարց 3. Այլ հարցեր:

Նիստը վարում է կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Հարությունյանը**

Ա. Հարությունյանը խորհրդի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգը, որում ընդգրկված էր 3 հարց:

Խորհրդի անդամները օրակարգը հաստատեցին ՄԻԱՁԱՅՆ:

Նախագահողը առաջարկեց ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար Ալ. Շագաֆյանին ներկայացնել օրակարգային հարցերը:

<u>Օրակարգի առաջին հարցով</u> Ալ. Շագաֆյանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների պաշտոններում նշանակելու համար ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի գործող խորհրդական Ռաիսա Գալստյանի, և Երևանի ավագանու Ելք խմբակցության անդամ Նարա Հովհաննիսյանի թեկնածությունները:

Ալ. Շագաֆյանի գնահատմամբ ՀՀ կրթության տեսչական մարմնում Ռ. Գալստյանը ամենափորձառու և գիտակ մասնագետներից է: 2006թ.-ից աշխատում է ՀՀ կրթության պետական տեսչությունում՝ որպես հանրակրթության բաժնի պետ, 2008թ.-ից 2018թ.-ից՝

ՀՀ կրթության պետական տեսչության պետի տեղակալ և վերջին յոթ ամիսներին՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի խորհրդական: Ալ. Շագաֆյանը նշեց, որ բազմիցս առիթ է ունեցել գործի բերումով համագործակցել և գնահատել Ռ.Գալստյանի կարողությունները, որ նա բանիմաց մասնագետ է և իրականացնում է մեծ ծավալի աշխատանք: Համատեղ աշխատանքում ձեռք բերված տպավորությունն է հիմքը, որ տեղակալի պաշտոնում իր կողմից առաջադրվի Ռ. Գալստյանի թեկնածությունը:

Ինչ վերաբերվում է Ն. Հովհաննիսյանի թեկնածությանը, Ալ. Շագաֆյանը նշեց, որ բավականին երկար տարիներ է ճանաչում նրան, որպես նախկին գործընկեր ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտից, ունի բավականին լայն կապեր հասարակական կազմակերպությունների շրջանում և ներգրաված է տարբեր կրթական ծրագրերում, ինչը կարող է օգտակար լինել տեչական մարմնի համար: Ն. Հովհաննիսյանի փորձառությունը միջին մասնագիտական կրթության ոլորոտում իր ներդրումը կունենա կրթության տեսչական մարմնի այդ ուղղության աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպման համար:

Հ. Այվազյանը հարց ուղղեց Ալ. Շագաֆյանին տեղակալների համակարգման ոլորտների տեսանկյունից՝ աշխաատանքային բաժանումը:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ կանոնադրությամբ նախատեսված է վերլուծություն և վերահսկողություն, ուստի նախատեսվում է, որ Ռ. Գալստյանը կզբաղվի վերլուծական աշխատանքներով, իսկ Ն. Հովհաննիսյանը՝ վերահսկողական գործառույթներով:

Հ. Այվազյանը թեկնածուներին հարցրեց, թե՞ որ խնդիրներն են համարում առաջնային և նշել դրանցից երեքը:

Ռ. Գալստյանը նշեց, որ աշխատանքները իրականացվեն պատշաճ, արժանահավատ, պահպանենելով բարեվարքությունը:

Ն. Հովհաննիսյանը նշեց, որ կրթական հաստատությունների կողմից հնարավոր խախտումների կանխարգելման, նրանց վերահսկողության և հասարակության հետ կապի ապահովման գործընթացի կատարելագործումը պետք է իրականացվի համաչափ:

Բ. Փափազյանը Ալ. Շագաֆյանին հարցրեց, թե՞ ինչ կարգով են ընտրվում ՀՀ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալները:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնները վարչական պաշտոններ են, և ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարը օրենքով սահմանված կարգով իրավասու է կառավարման խորհրդի անդամների հավանությանը ներկայացնել տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների թեկնածուներին իր հայեցողությամբ:

Թ. Ավագյանը հետաքրքրվեց թե որն է ԿՏՄ ղեկավարի տեղակալների փոփոխություն անելու և նոր թեկնածուներ ներկայացնելու պատճառը:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ գործող տեղեկալները մեծ հաշվով իրանց առջև դրված խնդիրները լուծել են: Սակայն ներկա իրավիճակը ԿՏՄ-ից առավել արդնունավետ աշխատանք է պահանջում, դրանով է, մեծ հաշվով, պայմանավորված այս փոփոխությունը:

<u>Օրակարգի երկրորդ հարցով</u> Ալ. Շագաֆյանը ներկայացրեց 2018թ. առաջին կիսամյակում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացված դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվությունը:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ ՀՀ կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ ԿՏՄ) 2018թ. առաջին կիսամյակում ստացել է թվով 132 դիմում-բողոքներ (ներառյալ թեժ գիծը): ՀՀ կրթության պետական տեսչության նախորդ տարիների նույն ժամանակահատվածում ստացված դիմում-բողոքների վիճակագրությունն այսպիսին է. 2017թ.՝80, 2016թ.՝18, 2015՝ 11, 2014թ.՝ 14 դիմումներ:

2018թ. թվով 132 դիմում-բողոքներից 2-ը վերահասցեագրվել է ԿՏՄ ՀՀ վարչապետից, 2-ը՝ ՀՀ կառավարությունից, 55-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարից, 52-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունից (որից 39-ը ստացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով), 10-ը՝ ԿՏՄ խորհրդի անդամ Անահիտ Բախշյանից: Անմիջապես ԿՏՄ-ում ստացվել են թվով 8 դիմում բողոքներ (որոնցից 3-ը ԿՏՄ «Թեժ գիծ» հեռախոսակապով): Անդրադարձ է արվել նաև ՀԼՄ-ների թվով 3 հրապարակումներով բարձրացված հարցերին:

Ստացված թվով 132 դիմում-բողոքներից 128-ը ուսումնական հաստատությունների վերաբերյալ են, 4-ը՝ ընդհանուր բնույթի: Ուսումնական հաստատությունների վերաբերյալ դիմում-բողոքներից 8-ը՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններից (ՆՈՒՀ) են, 7-ը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից, 113-ը՝ դպրոցներից:

Ամենամեծ թվով դիմումները Երևան քաղաքից են (թվով 113 դպրոցներից 47-ը Երևան քաղաքի դպրոցներ են՝ շուրջ 42%): Բողոքների թվով 2-րդ տեղում ՀՀ Արարատի և ՀՀ Շիրակի մարզերն են (հավասար)՝ 12-ական դիմում: Ամենաքիչ թվով դիմումները ՀՀ Վայոց ձորի մարզից են:

Դիմումները հիմնականում վերաբերում են ուսումնական հաստատություններում իրականացվող դրամահավաքությանը, գործատու-աշխատող փոխհարաբերություններին, դպրոցում տիրող անառողջ մթնոլորտին:

Դրամահավաքությանը վերաբերող հարց է բարձրացվում դիմումներից 50-ում, որը կազմում է ընդհանուր դիմումների 38%-ը: Դրամահավաքությանը վերաբերող դիմումներից 27-ը Երևան քաղաքից են (դրամահավաքությանը վերաբերող դիմումների գրեթե 50%-ը): Ալ. Շագաֆյանը նշեց, որ տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին են անդրադարձել 132 դիմումներից 73-ում (55%): Այս դեպքում ևս գերակշռողը Երևանն է (73-ից 25-ը՝ 34%): Այս հարցը բարձրացված է Երևան քաղաքից ստացված 57 դիմումներից 25-ում: Մայիս ամսից դրամահավաքին վերաբերող դիմումների գերակշռող մասը վերահասցեագրվել է ՀՀ ոստիկանության տարբեր վարչություններ: ԿՏՄ-ում սկսել է ստացվել ՀՀ ոստիկանության տարբեր վարչություններից գրություններ (թվով 4): Դրանցից երեքում նշված է, որ վարույթը կարճվել է հանցակազմ չլինելու պատճառով:

2017թ. նույն ժամանակահատվածում ՀՀ կրթության պետական տեսչությունը ստացել է թվով 80 դիմում բողոքներ: Բողոքներից 32-ը ստացվել են Երևան քաղաքից (40%) և ընդամենը 1 դիմում՝ ՀՀ Վայոց ձորի մարզից: Բողոքներում բարձրացված հարցերը գրեթե նույնաբովանդակ են ինչ 2018-ին: Դրամահավաքությանն են վերաբերել դիմումներից 35-ը (44%), Երևան քաղաքի դպրոցներին վերաբերել են 23-ը (դրամահավաքությանը վերաբերող դիմումների 68%-ը), տնօրենի կողմից թույլ տրվող անօրինականություններին են անդրադարձել դիմումներից 21-ում:

2018 թվականին իրականացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում.

ա) կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել ՀՀ թվով 22 ուսումնական հաստատություններում (**Երևանի հ.հ. 14 հատուկ, 35, 51, 85 հիմնական, 101 միջնակարգ դպրոցներ, 114, 120 մանկապարտեզներ, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի հ. 4 հիմնական, Դալարի, Եղեգնավանի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Արմավիրի մարզի հ. 10 հիմնական, Շահումյանի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի հ. 1 հիմնական դպրոց, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի մանկապարտեզ, ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի, Բյուրակնի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի հ. 3, Հրազդանի հ. 12 հիմնական դպրոցներ, ՀՀ Սյունիքի մարզի Բարձրավանի, Շվանիձորի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Տավուշի մարզի Ոսկևանի մանկապարտեզ**): Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են լիազոր մարմինների ղեկավարներին՝ քննարկելու, հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, արդյունքների մասին ԿՏՄ տեղեկացնելու առաջարկով: Պատասխան գրություններ են ստացվել Երևանի քաղաքապետից, ՀՀ Արմավիրի մարզպետից:

բ) թվով 11 ուսումնական հաստատություններ ներառվել են ԿՏՄ 2018 թվականի ստուգումների ժամանակացույցում (**Երևանի հ. 13 հատուկ, 55 հիմնական, 101 միջնակարգ, ՀՀ Արարատի մարզի Սիսավանի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի մանկապարտեզ, Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական, Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի, Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2, ՀՀ Շիրակի մարզի Շիրակի տարածաշրջանային, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, Նոյեմբերյանի պետական քոլեջներ**):

գ) **վերագործարկվել է** ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղի մանկապարտեզը, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի հ. 10 հիմնական և Շահումյանի միջնակարգ դպրոցների տնօրենները **նախազգուշացվել են**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոցի տնօրենը ստացել է կարգապահական տույժ **«նկատողություն»,** ՀՀ Արարատի մարզի Եղեգնավանի միջնակարգ դպրոցի տնօրենը ստացել է կարգապահական տույժ՝ **«խիստ նկատողություն»,** Երևանի հ. 120 մանկապարտեզի և ՀՀ Արարատի մարզի Դալարի միջնակարգ դպրոցի, Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական պետական քոլեջի տնօրենները, նույն քոլեջի ուսումնական գծով փոխտնօրենը **ազատվել են զբաղեցված պաշտոնից**:

Ա. Բախշյանը Ալ. Շագաֆյանին հարցրեց, թե ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում, երբ մարզպետներին ուղղված գրությունները մնում են անպատասխան:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ մինչ օրս լիազոր մարմինների կողմից հետադարձ կապի հետ կապված խնդիրներ չի նկատվել, սակայն դրանց առաջանալու պարագայում համապատասխան գրություն կուղղվի ՀՀ տարածքային կառավարման նախարարին, անհրաժեշտության դեպքում նաև ՀՀ Վարչապետին:

Քննարկման ընդացքում հնչեցին առանձին կարծիքներ և մեկնաբանություններ:

Այլ հարցեր չքննարկվեցին:

Ամփոփելով նիստը՝ կառավարման խորհրդի նախագահ Ա. Հարությունյանը քննարկված հարցերը դրեց քվեարկության:

Խորհուրդը միաձայն որոշեց՝

1. **Հավանություն տալ** Ռաիսա Գալստյանի, Նարա Հովհաննիսյանի թեկնածությանը և ներկայացնել ՀՀ վարչապետին՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոններում նշանակվելու համար:
2. **Հավանություն տալ** 2018թ. առաջին կիսամյակում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացված դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվությանը:

ՀՀ կրթության և գիտության նախարար, խորհրդի նախագահ

Ա.Հարությունյան

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար, խորհրդի անդամ

Հ.Այվազյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա.Բաբայան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Ասատրյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Հայրապետյան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ, խորհրդի անդամ

Ս.Ալոյան

«Թումո» սեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն, խորհրդի անդամ

Բ. Փափազյան

«Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի կրթության հարցերով խորհրդական, խորհրդի անդամ

Ա. Բախշյան

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ

Թ.Ավակյան

ՀՀ ԿԳՆ ԿՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ, խորհրդի քարտուղար

Ա.Գևորգյան